

Այրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ, Այրպէյճանի անկախութեան 10րդ տարեդարձին առիթով կայացած հանդիսութեան մը ընթացքին, շեշտելով անկախութեան կարեւորութիւնը յայտարարած է. «Եթէ խաղաղութիւն չհաստատուի, մենք ուժի միջոցով ետ կ'առնենք Լեռնային Ղարաբաղը»:

Նոյն առիթով, պատկերասփիռէն ելոյթի մը ընթացքին Ալիեւ յայտնած է, թէ Այրպէյճան երբեք պիտի չիրաժարի Լեռնային Ղարաբաղէն: «Աշխարհը այսօր ահաւոր ահաբեկչութեան առջեւ կը գտնուի: Մենք լաւ գիտենք, թէ ինչ է ահաբեկչութիւնը: Ահաբեկչութիւնը պէտք է անհետանայ», աւելցուցած է Ալիեւ:

ՍԱՐՏԱՅՐԱԲԵՐՆԵՐԸ ԴԻՄԱԳՐԱԲԵԼՈՒ ԶԱՍԱՐ

ԱՆՅՐԱԺԵՇՏ Է ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԿԵՑՈՒԱԾՔ ՄԸ ԿԸՍԷ ԶՕՐ. ԼԱՇՈՒՏ

Նախագահ Կօր. Էմիլ Լահուտ երէկ ընդգծեց անիրաժէշտութիւնը միացեալ արաբական կեցւածքով դիմագրաւելու այս պայտուն հանգրիւանի բազմաթիւ մարտահրաւերները:

«Արաբական միտք» հիմնարկի նախագահ, սեփական Լաիք շրջանի կառավարիչ Խալիտ Պրն Ֆայսալ Պրն Ապտէլ Ալիյ իշխանը, հիմնարկի խնամակալութիւնն ու Լիբանանի մէջ Սեփական Արաբիոյ դեսպան Մոհամէտ Սատէք Միւսթօնի բնութեամբ ատեն նախագահ Լահուտ նաեւ վեր առաւ ոչ կառավարական կապակերպութիւններու դերակատարութիւնը արաբական ընկերութեան մէջ ինչպէս նաեւ պետական կառոյցներուն հետ անոնց գործակցութեան օգտակարութիւնը՝ հաւաքականութեան:

Սեփական իշխանը նախագահ Լահուտի ներկայացուց իր կեդրոնատեղին Պէյրութի մէջ հաստատած այս հիմնարկի խնամակալութեան ժողովին արդիւնքները եւ մշակութային գործունէութեան նպատակները: Ան շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լահուտի եւ իբրանանեան կառավարութեան կողմէ այս կապակերպութեան ցուցաբերուած պօրակցութեան եւ անոր բնծայուած դիւրութիւններուն համար:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց Լիբանանի մէջ Մարոքի դեսպան Ապտէլ ժալիլ Ֆանսերուն, որուն հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ երկու երկիրներու միացեալ գերագոյն յանձնախումբի այսօր գումարուելիք ժողովին օրակարգը:

Նշենք, որ Մարոքի վարչապետ Ապտէլ Ռահման Եուսուֆի այսօր պատուիրակութեան մը ընկերակցութեամբ կը ժամանէ Պէյրութ:

Լահուտ աշխատանքի նախարար Ալի Քանսոյի հետ քննարկեց գործատեղերու եւ Աշխատանքական Համադրանակցութեան ներկայացուցիչներուն միջեւ երկխօսութեան ընթացքը, ինչպէս նաեւ անոր նախարարութեան աշխատանքները:

Հանրապետութեան նախագահը երկրի ապահովութեան վիճակն ու բանակին վերաբերեալ հարցերը քննարկեց բանակի հրամանատար Կօր. Միշէլ Սիւլէյմանի հետ:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Նախարարաց խորհուրդը երէկ, յետմիջօրէին Թանգարանի իր կեդրոնատեղին մէջ գումարեց չարաթական իր հերթական նիստը, նախագահութեամբ նախագահ Կօր. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Նիստէն առաջ Լահուտ եւ Հարիրի ունեցան առանձին հանդիպում մը:

Նիստին քննարկուեցան օրակարգի 31 կէտ. հիմնական հարց էր երկարակալութեան հարցը: Որոշուեցաւ երկարակալութեան ընկերութեան արամագրել 200 միլիարդ Լ. ու, փակելու համար ընկերութեան պարտքերը, ինչպէս նաեւ ուժանիւթի եւ ջրերեկարակալութեան նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալուտինի վստահուեցաւ ընկերութեան ներկայ իրավիճակի ուսումնասիրութիւնը, դիմագրաւած դժուարութիւնները եւ գանոնք լուծելու յարմար միջոցառումները:

Նախարարաց խորհուրդը համաձայն գտնուեցաւ ներքին գործոց եւ քաղաքապետութեանց նախարարութեան ներկայացուցած այն առաջարկին, որ պէտք է քարահանքերու շահարկումի պայմանաժամեր երկարաձգել: Այս գծով յանձնախումբ մը կազմուեցաւ, զիստորութեամբ փոխ վարչապետ Խոսեմ Ֆարէսի:

Նախարարաց խորհուրդը չքննարկեց վարչական եւ Լիբանանեան համալսարանի տարբեր բաժանմունքներու նախագահներու նշանակումներու հարցերը:

ՆԱԽԱՐԱՐԻ ՄԸ ԿՈՂՄԷ ԲՅԻՋԱՅԻՆ ՀԵՆԱՅԱՅՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻ ՌԻՆԿՆԴՐՈՒԹԵԱՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՆԵՐԱՅՄԱՆ ԳԾՈՎ

ՊԸՐՐԻ ԱՏՏՈՒՄԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԵՐԵԻԱՆ ՀԱՆԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ հեռաձայնեց ընդհանուր դատախաչ Ատնան Ատունիի եւ պահանջեց, որ լուրջ եւ արդիւնաւոր հետաքննութիւն կատարուի այն տեղեկութիւններուն մասին, թէ նախարար մը ներառած է բքիշային հեռաձայնի խօսակցու-

ՆԱԽԱՐԱՐԻ ՄԸ ՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐՈՒԱԿԵԼՈՎ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆԵՐՈՒԹԵՑ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԱՐԱՖԱԹԻ ԱՐԳԻԼՈՒԵՑԱԻ ԿԱԶԱՅԻ ՕԴԱԿԱՅԱՆԸ ԳՈՐԾԱԾԵԼ

Իսրայէլ երէկ հրապարակեց պաղեստինեան շրջանները, նոր բախումներ ու գոհեր պատճառելով: Իսրայէլ նաեւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Արաֆաթին պաղեստինեան շրջանները իսրայէլ-

սպանութիւնը պատճառարձաւ, որ Իսրայէլ նոր միջոցառումներ որդեգրէ կազմի ու Այսրորդանանի բնակչութեան դէմ: Իսրայէլ արգիլեց նաեւ Արաֆաթին կազմի օգակաշանը գործածելէ: Ապահովութեան ագ-

սակայն, որ այս որոշումը չի նշանակեր, թէ Արաֆաթ կազմին դուրս չի կրնար գալ: Որոշումը տրուած է ղեկավարացնելու համար պաղեստինցի ղեկավարին շարժումները: Արաֆաթի խորհրդատու Նա-



Իսրայէլացի զինուորացիներ կը կրակեն պաղեստինցիներու վրայ Ռամալլայի մէջ:

յացի նախարարը սպաննողները: Զբոսաշրջութեան նախարար Ռեհաւամ Զիւրի-

րիւրներ հաստատեցին, որ օդակայանը չգործածելու որոշումը ի գործէ: Անոնք զիտել տուին

պիլ Ապու Ռուտայնա ըսաւ, որ Իսրայէլի այս Ծարք՝ էջ 3

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՏԱՎԱԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՀԱՍՆԻՆ ԿՈՐԻՋԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ

Ահաբեկչական ոչ աւանդական յարձակումներու գծով ամերիկեան մտավարչութիւնները երէկ անթրաքսին եւ կենսաբանական պատերազմէն անդին՝ կորիզային ապահովութեան հաստատութեան նախագահ Էրիկ Սթիւարթի մեծ գործարան մը «հաւաստի սպառնալիք» մը ստատարեց: Երբ իստ պատրաստ վիճակի մէջ դրուեցաւ:

Փեյնսիլվանիոյ «Թրի Մալլ Ալլըն»-ի գործարանը ապահովութեան չափապանց խիստ միջոցառումներու դիմած է, ամերիկացիներուն ջիղերը աւելի եւս գրգռելով:

Գործարանին մօտակայ Հերիսպըրկ միջապային օդակայանը եւ Լէնքէսթըր օդակայանը չորս ժամ փակ մնացած են:

Կառավարութիւնը 1 միլիոն տոլար վարձատրութիւն խոստացած է տեղեկութիւններու համար, որոնք կրնան նամակներու ճախով անթրաքս դրկողներու ձեռքակալութեան օգտակար լլլալ:

Նամակներու ճախով անթրաքսով վարակումը շորեքշաքթի օր պարտադրած էր ամերիկեան Բոնկրէսին մէկ բաժինին աննախընթաց փակումը



Աֆղանցիներ կը դիտեն հսկայական փոս մը, որ գոյացած է ռմբակոծումէն ետք:

եւ աշխարհի տարածքին ելեւմտական շուկաներու անկումը պատճառած:

Հանրապետականներու հակակշիռին ենթակայ Ներկայացուցիչներու Տունը մինչեւ երեքշաբթի օր փակուած է անթրաքսի քննարկներու համար: Սակայն դեմոկրատներու հակակշիռին ենթակայ Օբերկոյտը նիստ կայացուցած է երէկ՝ Բոնկրէսի անձնակազմի 31 անդամներու քննութիւններուն արդիւնքները՝ անթրաքսի ենթակայ ըլլալով դրական դուրս գալէ ետք:

Վարակումը հասած է երկուշաբթի օր անթրաքս պարունակող նամակի մը մէջ՝ Օբերկոյտի մեծամասնութեան ղեկավար

Թոմ Տէշըյի գրասենեակը:

Մ. Նահանգներու հայրենիքի ապահովութեան պատասխանատու Թոմ Ռիժ երէկ յայտնած է, թէ քննութիւններու ենթարկուած հապարաւոր անձերէ հինգի արդիւնքները դրական դուրս եկած են անթրաքսի գծով:

«Սի. Պի. Էս.» կայանին մէկ պաշտօնէանին քննութիւններուն արդիւնքները դրական եղած են մորթի անթրաքսի համար, ընկերութիւնը դարձրելով երրորդը, որ ենթակայ կ'ըլլայ մահացու հիւանդութեան:

Անթրաքսի գծով մտավարչութիւնները ամերիկեան սահման-

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ Ե. ԽՈՐՀՈՒՐԴԻ ԴԵՏԵՐԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի հարցերով զբաղող դէտերու յանձնաժողովը: Դէտերու նշեալ խմբակը Հայաստան ժամանած էր ծանօթանալու համար Եւրոպական խորհուրդի նկատմամբ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններու կատարման ընթացքին:

Հանդիպումին ընթացքին կողմերը քննարկեցին սահմանադրական բարեփոխումներու ընթացքը եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան առնչուող հարցեր: Նախագահ Քոչարեան նշեց, որ Հայաստան ամենայն լրջութեամբ կը մօտենայ Եւրոպական խորհուրդի առջեւ իր ստանձնած պարտականութիւններուն, եւ վճռական է անոնց իրագործման մէջ:

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի հարցերով զբաղող դէտերը նաեւ հանդիպումներ ունեցան վարչապետ Անդրանիկ Մարգարեանի եւ Ազգային ժողովի նախագահ Արմէն խաչատրեանի հետ, որոնց հետ քննարկեցին Եւրոպական խորհուրդի առջեւ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններու կատարման առնչուող հարցեր:

Հ. Յ. Դ. ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ԴԵՄՊԱՆ ՃՈՆՁԻ ՀԵՏ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի մէկ պատուիրակութիւնը երէկ հանդիպում ունեցաւ Հայաստանի մէջ Մեծն Բրիտանիոյ դեսպան Թիմոթի ձոնլի հետ:

Կողմերը անդրադարձան վերջին շրջանին համաշխարհային հասարակութիւնը մտահոգող ահաբեկչութեան եւ անոր դէմ պայքարի մթնոլորտին մէջ Այրպէյճանի կողմէ շրջանային տագնապներու բնոյթը կեղծելու փորձերուն, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապը ուժի միջոցով լուծելու մասին Պաքուի յայտարարութիւններուն:

Կողմերը անդրադարձին նկատեցին հակահաբեկչական պայքարի անուան տակ շրջանի իրավիճակի արուեստական սրումը, եւ միջապային իրավիճակէն օգտուելով խաղաղ միջոցներէն հրաժարումը:

ՌԺԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ

ԱԶՐՊԵՅԾԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԶԳՋԱՅ

ԿԸՍԷ ԶՕՐ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ազերի քաղաքական կարգ մը պատասխանատուներ վերջերս յաճախ յայտարարութիւններ կը կատարեն Լեռնային Ղարաբաղի տագնապը զինուորական միջոցներով լուծելու առնչութեամբ:

Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար, Կօր. Միքայէլ Յարութիւնեան, երէկ լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին յայտնած է. «Համոզուած եմ, որ Ազրպէյճանի ղեկավարութիւնը պիտի չդիմէ նման քայլի մը: Այդ յայտարարութիւնները մեզի առիթ կու տան շատ աւելի ուշադրութիւն դարձրնելու մեր գինուորական կարողութիւններուն ամրապնդման: Մենք այս հարցով կը զբաղինք ամէն օր, եւ պիտի շարունակենք նոյնը ընել ապագային»:

Յարութիւնեան ըսած է, թէ այսուհանդերձ եթէ Ազրպէյճան զիմէ Լեռնային Ղարաբաղի տագնապը ուժի միջոցով լուծելու փորձի մը, ապա «պիտի գղջայ իր իսկ որոշումին վրայ»:

Յարութիւնեան աւելցուցած է, թէ այդ պարագային Հայաստանի բանակը մեծ յաջողութեամբ պիտի կատարէ իր պարտականութիւնը:

ՀԱՅԵԻԶԻՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի գլխաւորած պատուիրակութիւնը, որ Չինաստանի մէջ հանդիպումներ կ'ունենայ չին ղեկավարներու հետ, երէկ հանդիպում ունեցաւ Չինաստանի փոխ նախագահ Հու Ժենթաուի հետ:

Կողմերը անդրադարձան վերջին տասնամեակին ընթացքին հայեւջիւնական յարաբերութիւններու վարձացման ընթացքին: Երկու երկիրներու բանակներու համագործակցութիւնը

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏ



Հանդիպումին մասնակիցները

16 Հոկտեմբերին Շ. Յ. Դ. Յունաստանի կեդրոնական Կոմիտեն իր կեդրոնատեղիին մէջ քնդուռնած է Հայրենի գինու որակյան պատուիրակու թխն մրորուն մաս կը կազմեն Հայաստանի պաշտտանութեան փոխ նախարար Գօր. Արթուր Աղաբէկեան, Հայաստանի ոսպմական հիմնադրի պետ Գօր. Ստեփան Սիրոգլեան եւ Հայաստանի բանակի բժշկական ծառայութեան պետ Կնդ. Բժիշկ Գրիգոր Աղայեան: Պատւիրակութեան կ'ընկերակցէր Յունաստանի մէջ Հայաստանի դեսպանատան գինու որակյան կցորդ Կնդ. Արա Ստեմկեան:

Հայրենի գինուրական պատուիրակուլթեան Աթէնք ալցեթելու նպատակն էր յունական կողմին հետ հետապալ գործակցութան խորացումը:

Պատուիրակութիւնը անցնող օրերուն հանդիպումներ ունեցած էր Յունաստանի պաշտպանութեան փոխ նախարար Տիմիթրի Ափուսթոլաքիսի եւ տարրերը զօրամիտորումներու բարձրաստիճան գլխաւորակններու հետ:

Հայրական պատուիրակութեան եւ Հ. Զ. Դ. Յու-
նաստանի Կեդրոնական Կոմիտէի միջեւ հանդիպման
ընթացքին իտալացիութեան նիւթ զարձած են Հայաս-
տանին ու Հայրական ազգային բանակը շահադրող
նիւթներ եւ հարցեր: Հանդիպման տւարարին փոխ-
նակուած են նուէրներ:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՐԽԱՋԻԱ
ԵՐԿԱԹՈՒՂԻՒՆ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆԸ
ԱՊՀԻ ԽԱՂԱՂԱՐԱՐ
ՈՒԺԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Ներկայախոս Ռուսիա - Վրաստան միջխորհրդարար-
նական լսանձնախոսակցության անցումը արդեն կր ասանի
նախնական Անդրկովկասեան երկաթուղիի արխագեան
շահութաբաժնի վերաբարյան տարբերակներէն մէկուն
նկատելով:

Յանձնախումբին ռուսական մասի անդամ, Ռուսիայի Պետական Տուժարյի մշակոթթի, տեղեկատուութեան, գրասաչրժութեան եւ մարմնակրթութեան յանձնախումբի անդամ Երեան Տրափերա քանմէ, թէ իրախագական երկաթուղիին վերաբացման ուղղութեամբ իսնակցութիւնները պէտք է ընթանան այն հարցին չուր, թէ ուղղական իրաթիծակր պէտք չէ ազդէ երկաթուղիին կացութեան վրայ, որովհետեւ անիկ կ'անցնէ ծովափէն, իսկ զինուորական դրածութիւնները լեռներուն վրայ կ'ընթանան: Ըստ անոր, կրնայ արծարծուիլ Վրաստան - Արխագիսախումբներու գտարին մէջ գտնուող երկաթուղիին վտանգի ենթակայ հատուածը ԱՊՀի իսակցարարութեան կողմէ հակողութեան տակ առնելու հարցը:

Ըստ Երեւա Տրափիքայի, իրբեւ գրօսաշրջութեան երկիրը, Հայաստանի նկատմամբ հեռաքրքրութիւնը շատ մեծ է Ռուսիոյ մէջ եւ ուսանական կողմը պատրաստ է գալիս խմբանկու: Ան նշեց, թէ մինչեւ չվերականգնի Ռուսիա - Վրաստան - Հայաստան երկակիութեան հաղորդակցութիւնը, Ռուսիայէն գրօսաշրջիկներու ներհնաքր եւ Ռուսիոյ եւ Հայաստանի միջեւ տրադիցութիւններու շրջանաւարտութեան ծաւալը չի մեծնար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒՆ ԶԳՕՆ
ԸԼԼԱԼՈՒ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ

Վերջերս հայաստանեան որոշ ընկերութիւններ, Հայաստանի քաղաքացիներուն տալով տարբեր երկրներու մօտեցիկ կեցող Վիզաներ անոց կը խոստանան արտերկրի մէջ բարձր վարձատրութեամբ աշխատելու: Վերոյիշեալ խոստումը կը վերաբերի նաեւ, այնպիսի երկիրներու, ուր միջին աշխատավարձը բարձր չէ, եւ երկիրը չաւելեալ մարդուց ունի:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը
յայտարարութեամբ մը կողքէ կ'ուզէ Հայաստանի քա-
ղաքացիներուն, ըլլալ գգօն, ուշադիր, չհաւատալ եւ
չխորհել գլխօթակցեցնող առջարկներէ, Հայաստա-
նի արտաքին գործոց նախարարութեան միջոցով
պարզել վիճաներու իսկութիւնը եւ տուեալ երկրին
մէջ տիրող տնտեսական ու քաղաքական իրավիճա-
կը:

www.hamazkayin.com

**ՀՕԽԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱՃԻԴԻ ՆԱԽԱՃԱՇ
- ԳՄԱՍԽՈՍՈՒԹԻՒՆ ՉԵՌՆԱՐԿԸ**

Աղբյուրեան ակումբին մէջ արդէն իսկ վերսկսած են լՕԽի «Նաշիբի» մասնաճիւղին հերթական ներառմանը - դասախօսուելով են ներքին յարաբերութիւնները: Երեքշաբթի, 9 Հոկտեմբերի առաւօտեան ժամը 10:30ին, մեծ թիւով լՕԽ կաաններու եւ մասնակիւրներու ներկայութեան դասախօսեց ուրբթ: Վահրամ Տօնապետեան: Դասախօսուելու են նիւթի էջ ճարպագործութիւնը (liposuction):

Տոբթ. Վ. Տօնապետ-
ան րացատրեց, որ ճար-
պագեթով ծնված զեղեպի-
տական գործողություն
ներ ձեռնմընչելու առաջին
մոթիվին վրա մեծ վնաս
տառջացնելու ու հե-
տքեր ձգելու՝ «կր. քաշէ»
մոթիվին առկա տեղերը
ուղեկր:

Ան յայտնած է, թե՛ հարպակալու մի պատճառները՝ գանապան են, ինչպէս՝ շատակերու թիւն, ծանր ճաշեր, անարթութիւն, ժաւանդական եւ դեղձային հիւանդութիւններ։ Ծարպարու պայմութիւնը կանխարգելիելու համար անհրաժեշտ է երեխան փոքր տարիքէն՝ հաւասարակշռուած սննդակառնելու եւ տարբեր մարգանքներու։ Իսկ չափահասներու դիւրութիւնը բուժելու համար կան գտնուած միջոցներ, ինչպէս՝

դեղեկորու գործածութիւնն, չողարձակուամով ստամոքսը փոքրացնելու եւ ալյն: Դասախօսը չեղտեց, որ այս ըսողին կողքին, ճարպերու կանխարգիլման կարեւոր մէկ ազդակը կամքն է:

ՏՈՔՐԵՔ. Վ. Տօնապետեան նաեւ նշեց, որ լիպօ-տաքշըն գործողութեամբ կը պակսին մարմնին աւելորդ իւզի ըջիջները: Գործողութիւնը յաջող կը նկատուի, երբ կը պակսի մարմնին չամպպոստիտ քանակութեամբ ճարպ, հակառակ մարմնի ալյն ճարպերը, մարմնին մէջ մնալով, տձեւութիւն կը յառա-

Դասախօսութեան աւարտին ներկայները ուղղեցին հարցումներ: Ապա հրամայեցաւ նախաճաշ: Ձեռնարկին ընթացքին տեղի ունեցաւ վիճակահանութիւն, որուն հասոյթը պիտի յատկացուի շրջանին մէջ ընկերային բժշկական հասոյթներուն: Շրջանի ԼՕՅականներէն Սօսի Գառարեան ներկայացուց բնուցով պատասխանած իր ձեռային աշխատանքները: Ձեռնարկին աւարտին մասնաճիւղի ատենապետը Շ. Գառաջեան ներկայներուն ուղղեց իր շնորհակալութեան խօսքը:

ፊጊ ፊህኒክስ

ԱՆԹԻԼԻԿԱՍԻ ՄԷՋ ՍԻՍԻ
«ՄԱՅՐ ՄԱՇՏՈՅ»-Ի
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Արամ Ա. կաթողիկոսի հրաւերով երկու շաբաթէ ի վեր «Կիլիկիա» թատեղարանին մէջ Երեւանի Մ. Սաշ-տոցի անուան մատենադարանի զետաշխատող Սուսանան Բարսեղեան լծուած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան աւելնէն արժէքաւոր ձեռագիր-ներէն՝ Սիւրի «Մալլր Մաշտոց»-ի (14րդ դար) վերանո-րոգութեան եւ վերակազմութեան աշխատանքին, որ պիտի տեւէ եօթը շաբաթ: «Մալլր Մաշտոց»ը կաթո-ղիկոսութեան դարաւոր կայքէն՝ Սիւրի մայրավան-քէն հրաշքով փրկուած ձեռագիրներէն մէկն է, որուն բնականաւորութեան մաս կը կազմէ Կիլիկիոյ Հայոց թագաւորին օծման կանոնը:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԾՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՆԱՀԱՆՋԷ

Պաշտօնական վիճակադրուժեանց տուեալներով,
անցեալ տարի Հայաստանի մէջ՝ ծնելիութիւնն ւնեցած
եղած է ա՛յն մակարդակէն, որ անհրաժեշտ է ընակ-
չութեան ընկալն վերադառնալով իւր ապահովութեան
Համար:

Ուսումնաիրությունը պարզած է, որ Հայաստանի մէջ կրներ գաւաւ կը ծնին կանուկ տարիքին. ծնւթիւնը մասնաւորապէս բարձր է 20-24 տարեկան տղերուն քով: Իսկ ծնունդներուն թիւը գերերուն մէջ աւելի բարձր է, քան՝ քաղաքներուն մէջ:

Մարգերուհուն մէջ ծնելիութեան ամէնէն ցած մահարարակէր կոտաբօի, իսկ ամէնէն բարձրը Գեղարքունիքի մէջ է։ Տարրական եւ միջնակարգ կրթութիւն ունեցող կիներ աւելի շատ գտնուակ ունին, քան՝ միջին մասնաւորատական կամ բարձրագոյն կրթութիւն ունեցողները։

ՄԽԻԹԱՐ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՁԻ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երեքշարթի, 16 Հոկտեմբերին, կայացավ Հայկա-
կան Կարմիր խաչի Ընկերութեան երրորդ ընտրու-
թիւնը, որուն Հայաստանի բոլոր մարզերու 153
պատուիրականներէն ներկայ էին 144ը, իսկ քուէարկու-
թեան մասնակիցեան 127 պատուիրակներ:

Նախագահի թեկնածու առաջադրուած էին Հայկական Կարմիր Նախ Ընկերութեան նախագահ Ներկայ պատածոնակիրար Գուրգէն Բռշեան, ընկերութեան առաջին օգնութեան ուսումնամեթոտական կեդրոնի տնօրէն Սովսէն Պօղոսեան եւ ընկերութեան յետադիմառած քային զերեկանկողողական միջնագային կեդրոնի տնօրէն Սիւրիսար Մշտանեանքն:

Քուէարկութեան ընթացքին առաջին երկուքը հանդէս իրենց թեկնածուներն էր. բայց բռնէարկութեամբ, 121 կողմ, 1 դէմ եւ 5 ձեռնպահ ձայներով նախագահ ընտրուեցաւ Սիւրթար Մնացականեան:

ԱՇԿՈՒՄ

ԱՇԽԱՏ

Ծաբաթ, 15 Սեպտեմբերի մեր թիւի Տղո էջով
հաշրեմի «Ազգ» թերթէն արտատպած էինք
«1700ամեակին նուիրում առլաս» խայտառակ
եւ ասօթալի սխալներով յօդաածը, Գալիանէ
Մուրղեանի ստորագրութեամբ:

Յօղութեան գիրքը կը գրէ. «Տեղեկացնենք մա-
նէ, որ տալաք յոյս է տեսել 1000 տպաքան-
կով (փառք Աստուծոյ, որ աւելի սեփշ տպաքա-
նակը), հրատարակիչը Հայաստանի գիտութեան
ու կրթութեան նախարարութեան «Էքսպան» ընկե-
րութիւնը է, սակայն տպագրութիւն է Հալէպի
«Վարդան Սրպայեան Պարզ» (?) անուամբ տպա-
րանոմ: Ինչո՞ւ Հալէպում, ինչքա՞ն պետական
սիւրճոցներ են մշակուել, ի՞նչ սկզբունքներով են
ընտրուել տալաք հրատարակչութեան «մաս-
նագէտները», ուրիշ ի՞նչ գրքեր է տպագրել վե-
րոյիշեալ ընկերութիւնը: Հարգել, որոնք պա-
տասխան են պահանջում, եւ որոնց խոստանում
ենք հետամտու լինել սինչել վերջ»:

Այս տարբերութեան մէջ «Վարդան Սրապեան Պարզ» անունին քով դրուած պարոյկը (°) չի վերաբերիր տպարանի անունին, այլ՝ ատլասի Հալէպ տպուելու երեսութիւն:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՔԱՀԱՆԱՅԻՑ
ԴԱՍԱՐԱՆԸ ԿԸ ՎԵՐԱՐԺԵԻՈՐԻ
ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ
ՆՈՒԻՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԻԶԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրե-
վանքին մէջ տարիներէ ի վեր բացուած է քահա-
նայից պատրաստութեան դասարան մը, որուն
կրճատ մասնակցիլ ամուսնացեալ քահանայութեան
ճամբով մեր եկեղեցւոյ ու ազգին ծառայելու կոչու-
մունեցող երիտասարդներ: 1930 թուականին, երբ
Անթիլիասի մէջ վերահաստատուեցաւ Կիլիկիոյ
կաթողիկոսութիւնը եւ հիմը դրուեցաւ դպրեվանքին,
անոր նպատակն էր կուսակրօն միաբաններ եւ
ամուսնացեալ քահանաներ պատրաստել մեր ժողո-
վորդի հոգեւոր կարիքներու մատակարարման հա-
մար:

Աշխարհի գարգացման արագավազ հեղքին մէջ ըլլալով՝ բոլորս ալ կ'անդրադառնանք, որ անգրագէտ կամ կիսագրագէտ, սոսկ ծիսակատար կամ նոր գարգացող ընկերային երեւոյթներուն անտէնակ քահանաներու աշխատանքային շրջանը փակուած է ալլեւս: Ծխատել քահանայէ տը ակնկալուածը ալլեւս «*ալէլուա օրթի*» տը չէ, ինչպէս կ'իսրէլնախորդ սերունդը, այլ, ծխական արարողութիւններէն անկախ, նաեւ իր ծխայիցներու ուրախութեան եւ տրտմութեան պահերուն լատուկ մօտեցում ցուցաբերելու կարողութիւն: Ներկայ մարդկային ընկերութեան բարոյական հարցերը մօտիկ ապագային սենձ ան պիտի արժանագրեն, որոնց դիմաց եկեղեցւոյ վահանը պիտի ուզեն իրենէ շատեր: Բայց երբ աղ վահանը վերցնող գինուորը տկար է եւ անգօր, վահանը իբրեւ անգործածելի իր գետին կ'իյնայ ու մարդոց ոտքի կոխան կը դառնայ: Քահանան է եկեղեցւոյ գինուորը, որ իր գէնքն ու գրանրօգտագործելու հասնար պէտք է վարձ ըլլայ պատերազմի բոլոր կերպերուն եւ նոյնիսկ ծանօթ ըլլալ թշնամիին մարտավարութեան: Ի՞նչպէս կրնայ իր շուրջ երիտասարդներ կամ համալսարանական ուսանողներ համախմբել այն քահանան, որ պատրաստ պատասխաններ չունի այժմու երիտասարդութիւնը լուզող հարցերուն մասին: Տակաւին ի՞նչպէս կրնայ իր ծխայիցներուն կողմէ գնահատուի, երբ սահմանափակ կարողութեան պատճառով միխթարակեան իր խօսքը աւելի աւել կը գործէ, քան քրիստոնէութեան հաւատքի ամրապնդում՝ սուրի պարագային:

Վերջին տարիներուն մեր եկեղեցական ու ազգային կեանքը ալեկոծած Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի քարոզչութիւնը եւ տեղի ունեցող ձեռնարկները ամէն տեղ, ամէն գաղութի մէջ մեր ժողովուրդի գաւակներուն հետաքրքրութիւնը շարժեցին՝ համդէպ մեր պատմութեան անկորնչելի արժէքներուն: Եկեղեցական ժառանգութիւն, կրօնական ու մշակութային արժէքներ, որոնցմով սնունդ ու կազմաւորուի են մեր հաւանքը դարեր շարունակ:

Տակաւիճ տասնամեակ մը առաջ, յատկապէս երիտասարդ սերունդին համար, կեանքի դիրաւ ընտրելի ասպարէզ մը չէր քահանայութիւնը։ Սակայն այն հոգեփոխութիւնը, որ ապրեցաւ մեր ժողովուրդը 1700ամեակէն ետք, պատճառ դարձաւ, որ վերատեսութեան ենթարկենք մեր կեանքը։ 1700ամեակը առիթ մը եղաւ նաեւ յուսարձակի տակ բերելու և վերստին արժեւորելու մեր ժողովուրդի կեանքի իսկական արժէքները։ Քահանայական ծառայութիւնը ըլլալով մը եկեղեցական ու ընկերային կեանքի կարևորագոյն երեւոյթներէն մէկը, 1700ամեակէն ետք կը սկսի նոր արժեւորում ստանալ՝ իբրեւ ծառայական կեանքի պատուարէր ասպարէզ։ Այս իմաստով զարմանալի չէ, որ այս տարեշրջանին առկի քան քսան երիտասարդներ ղեկավար են Աթոյի իսպի կաթողիկոսարան, զանազան թեմերէ, որոնցմէ ոմանք համալսարանական են, խմբավարական և ալ մասնագիտութիւններ ունենցող, որոնք հայ եկեղեցւոյ ծառայութեամբ ճամբով կ'ուղեկ արժեւորել իրենց աստուածապարգէն կեանքը։

170) Խանգար բացառաճանապարհը դեպի նոր ժամանակաշրջան՝ քահանայական ասպարեզի վերադարձեւորման։ Քահանայն իսկական հայրն է մեր ժողովուրդին՝ բոլոր խաւերուն հետ առօրեայ շփման մէջ ըլլալով։ Անոր սուգին ու քէֆին մասնակից հարազատը, անոր ընկերային կենսքին բաժնեկիցն ու անոր բոլոր տեսակի ստահոգութիւններուն հաղորդ սրտակիցն ու վստահելի խորհրդատուն։ Գլեւթէ է դուրս գալ մեր ժողովուրդի ստանդորթներէն ու առօրեայ խօսակցութիւնէն քահանայական ծառայութիւնը վարկաբեկող դիտարութիւնը։ Քահանան իր կատարած ծէսին համար միայն դրամ գանձող պաշտօնէնայ մը չէ, այլ՝ իր այդ ծէսով ու աղօթքով Աստուծոյ օրհնութիւնը փոխանցող պատգամաբերը։ Երբ էր հաւատաստ աղօթքի գօրութեան, շնորհակալական զգացումով կը լեցուի սիրտը Աստուծոյ պաշտօնէալիկ նկատմամբ, եւ կը կրկնապատկոյի լարգանքը անոր կարգին ու աստիճանի հանդէպ։ Միւս կողմէ, իր կարգին ու աստուածահաճոյ առաքելութեան գիտակից քահանան բնական ընթացքով փոխադարձ լարգանքի պատուին կ'արժանանա իր արժանաւոր եկեղեցականները միշտ լարգան մեր ժողովուրդի զաւակներուն կողմէ։ Ահա՛ զլխաւոր քանի մը պայմանները 21րդ դարուն մէջ քահանայական պաշտօնին։ Մտաւորութիւն, որուն հախապատրաստութեան ընթացքը եւ կազմաւորութիւնը քստանաւ անոնք Անթիլիասի մէջ տարիներէ ի վեր հաստատուած քահանայից մասնաւոր դասարանից մէջ։

Միջապգային Քաղաքական Կեանք

ՊՈՒՇ ԵՒ ՊԼԵՐ ԱՐԳԵՆ ԿՈՐՄՆՑՈՒՑԱԾ ԵՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽՕՍՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պուշ Եւ Պլէր կրնան աշխարհին ըսել, որ «աճարեկշու թեան դէմ պատահեցաւ» էն յադթ ա կան դուրս պիտի գան, սակայն Միջին Արեւելքի մէջ, ուր Ուսամա Պըն Լամա էն արարեալ բուն համար գրեթէ անասապելական հերոս մը դարձած է, անոնք արդէն պարտուած են:



Աֆղանիստանի Բոտրմ գիւղին մօտ աֆղաններ կը ընճեն ամերիկեան չպայթած հրթիռ մը:

Ըլլալ իրանացի նախարար մը, սէուուցի թղթակից մը, յորդանանցի զբաժանատան պաշտօնէայ մը կամ եգիպտացի ընտանիք մը, պատասխանը կը մնայ նոյնը. «Պըն Լամա էնի ձայնը, որ անդադար կը հասնի միլիոնաւոր տուներ, կ'արձագանգէ Միջին Արեւելքի իսլամներու պահանջները»:

Եգիպտոսի «Ալ-Նասր» համալսարանին մէջ աֆղանիստանցի սպաններու անուններուն համար անոնք տեսած են, թէ ինչպէս իրենց արեւմտաձայն նախագահները, թագաւորները եւ իշխանները կը խուսափին Աֆղանիստանի բրիտանական իրկեանն ուսումնական իստորինքն քննադատելէ:

Արեւմտեան երկիրները Պըն Լամա էնի վերջին վկայութիւնը (եթէ ըսեալ լսեցին իր բաժնէները) կեղծողացան Միացեալ Նահանգներու զէմ կատարուած վարձագումներուն նկատմամբ անոր նկատողութիւններուն վրայ: Եթէ ան արտայայտեց իր հաւանութիւնը, սակայն մերժեց անձնական որեւէ պատասխանատուութիւն, ալ մէկը չի նշանակեր, որ Մեպտեմբեր 11ի գանգուածային ջարդերուն ետին կանցողոր իսկապէս ինքն էր:

Արարները տարբերակներուն մասին ըսին: Անոնք լսեցին ձայն մը, որ Արեւմուտքի կ'աւարտանայ Միջին Արեւելքի հանդէպ երկդիմի քաղաքականութեամբ եւ «յոյսորտանքով». ձայն մը, որ կ'արձագանգէր մեծ թիւով արարներու ըմբռնական կեանքի գիտաւոր հարցին պահեստին եւ իսրայէլի շարունակուող բռնագրաւման:

Ինչպէս որ երկար ժամանակէ ի վեր Եգիպտոս ապրող մէկը երէկ ըսաւ, թէ արարները այժմ կը հաւատան, որ Ամերիկան «կը փորձէ սպաննել միակ անձը, որ պատասխանէ իրականութիւնը»:

Արար քաղաքացիներ, որոնք յաճախ կը դժուարանան իրենց ինքնուրոյն կ'արձագանգէր մեծ թիւով արարները կը բախին իրենց պետութիւններուն հետ, ներկայիս աւելի ազատօրէն կ'արտայայտեն իրենց պարոյթը: «Կ'ըսեն, որ իրենց թիրախը Պըն Լա-

մա է. ըսաւ Սամար էլ Նէթի Յորդանանի մէջ. անպակ հարուածեն իս-

պնադատական մօտեցում ունին» հաւատալով, որ ան կը վարկարեկէ իսլամութիւնը: Անոնք պատրաստ են յոսեփա արդիւնք մը տեսնելու Աֆղանիստանի մէջ: «Գանատահար ունի թէ՛ թաղաւորութեան եւ թէ՛ թաղական»:

հարուած համակիրներ», ըսաւ ան: «Աֆղաններ, որոնք հակառուս մուհաիւններէն յուսախարժեցան պահանջներու դիմեցին, այժմ յուսախարեղած են թաղականներէն եւ կրնան ընդունիլ թագաւորութեան վերադարձը»: Սակայն այս կարծիքը, որ շատ հաւանաբար կը լսուի Սէուուական Արաբիոյ թագաւորական ընտանիքին ընդդիմութեան, կրնայ փոքրամասնութիւնը ներկայացնէ:

Այն երկիրները, որոնք տաւաղած են աճարեկէութեան, աւելի լեցուն տանջանքով եւ մահով, քան ճիշդ Երբեք եւ Վաշինգթոնի մէջ կատարուած մարդկութեան զէմ ոճիրները, պայաքած են նախագահ Պուշի դրամած լեզուէն:

«Զանգարած եմ ահաբեկչութիւն, ահաբեկչութիւն, ահաբեկչութիւն լսելէ. երեսիս քաղաքացիներէն արարութեան լիբանանցի անօրէն մը. Երբեք Երբեք եւ Վաշինգթոնի մէջ կատարուած մարդկութեան զէմ ոճիրները, պայաքած են նախագահ Պուշի դրամած լեզուէն»:

Մեծ թիւով իրանացիներ կը հաւատան, որ Արաբիոյ վարչապետ Արիէլ Շարոն պէտք է ամբաստանուի իրրեւ պատերազմային ոճրագործ, 1982ին պաղեստինեան Սապրա եւ Շաթիլա պաղեստինեան ջարդի մէջ իր ունեցած դերին համար: Այդ ջարդերուն ընթացքին մօտաւորապէս 1800 քաղաքացիներ (Սեպտեմբեր 11ին Ամերիկայի մէջ ջարդուած զոհերուն մօտաւորապէս կէսը) սպանուած էին 3 օրուան մէջ, Իսրայէլի դաշնակից բրիտանեայ միլիտներուն կողմէ, մինչ Իսրայէլի բանակը կը դիտէր պաղեստինացիներ շրջապէս:

ՌԵԴԱԿՏՈՐ ԿԵՍԵ

«Տի Ինտիփեմարք»

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

● Նախակրթարանի աշակերտներու համար: Հեռ. 01-266582:

ԳԱՂՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻ ՄԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ

«Բարոյական երկդիմութիւն թող չըլլայ», քանի մը օր առաջ որոտաց թոնի Պլէր, նոյնիսկ երբ ան ուրախութեամբ կը ստանար այդ հանգրուանի անկլո-ամերիկեան նշանաւորութեան համար մեծապէս երկդիմի պատահական ծրագիրներ: Այս անգամ անոնք նշան պիտի առնեն ոչ թէ անօթի իրաքի վերեւ ապօրինի կերպով կազմուած թուիքի համար արգիլեալ շրջաններ, այլ՝ բնակչութիւն մը, որ աւելի եւս անօթի է: Իսկական (աւելի ճիշդը՝ մարիաւելլական) բարոյական չափանիշով, հարուածը ստացող ժողովուրդը կրնայ գտնուիլ իրրեւ աշխարհի մէջնէն աւելի վախճած, իրաւագրկուած եւ անտեսուած քաղաքացիներու հաւաքականութիւնը:

10 տարի առաջ իրաքիներուն ներկայացուած «մարդասիրական» նոյն սեմաթիոյն ի պատասխան՝ այսօր ամերիկացիներն ու բրիտանացիները մէկ ոտքով ուսմը կը նետեն, իսկ միւսով՝ ուսեթիքի ծրարները: Ամօթալի փորձ մըն է չէ գործընդունալ, որ ինչպէս պատմութիւնը ցոյց պիտի տայ, գուտ վրէժիւնդրական գինուորական գործողութենէ մը ոչ աւելին է եւ ոչ մէկ «ճահիճ» պիտի մաքրէ:

Աշխարհի տարածքին իրենց պարտադրուած լուսթենէն դուրս սկսած են գալ ժողովուրդներ, որոնք երկար ժամանակէ ի վեր մղուած էին հաւատալու, թէ քաղաքականութիւնը անել ճամբու հասած է այն պիտի աշխարհի մը մէջ, ուր պատմութիւնը երթալարար աւարտած է: Քաղաքական եւ ընկերային իրաւունքներ (կիներուն կամ երեխաներուն իրաւունքները, կենսոյրոտային իրաւունքները), որոնք հրուած են համաշխարհայնացումի գործին տակ, սկսած են ակնթարթի մը մէջ եւ նպաստաւոր պայմաններու տակ մէկ առ մէկ դուրս քաշուիլ: Եւ այս մէկը մեզ կը տանի Աշխատութեան կուսակցութեան անցեալ շարժումը համագործակցութեան թոնի Պլէրի արտասանած ճառին:

Ամբողջական նախադասութիւններ կ'ազդէին եւ Սպիտակ Տան իր բարեկամէն աւելի դիւրութեամբ



Ճալալապատի ըմբակոծումներէն վիրաւորուած աֆղան մանուկ մը:

օտար անուններ հնչելու կարողութեամբ օժտուած բրիտանացի վարչապետ ինքզինքին պարտականութիւն տուաւ պատահելիքին մասին մեզի պատասխանելու իր խոստացած նոր աշխարհ (Պուշ ընտանիքի փորձուած խոհապիւրէն հատ մը եւս պիտի պատրաստուի) պիտի ըլլայ շատ հաճելի, ուր բարին պիտի յաղթանակէ եւ տառապանքը, մասնաւորաբար կիներուն, պիտի չօղիանայ բրիտանական սուզանաւերուն օժանդակութեամբ:

Սակայն Պլէրի՝ յարմար ժամանակին կատարուած պաշտպանութիւնը աֆղան կիներուն, որոնք տառապանքը գգալիօրէն աճ արձանագրած է այն օրէն, երբ արեւմտեան ժողովրդավարութիւններն սուր հետաքրքրութիւն ցուցաբերեցին անոնց երկրին նկատմամբ, կը յիշենք 19րդ դարու վերջաւորութեան Եգիպտոսի մէջ բրիտանացի կառավարիչ լորտ Քրոմըր եւ զէպի Ֆեմիլիզմ անոր յանկարծակի եւ առասպելական դարձը: Քուէարկելու իրաւունք պահանջող կիներու բուն հակառակորդ Քրոմըր ուստեղ կրօնական մոլեռանդութեան ճիրաններէն ազատել եղիպտացի կիները ճիշդ այն պահուն, երբ կը փորձէր Եգիպտոսի մէջ բրիտանական իշխանութեան զէմ արիւնհանգի միջոցներով ըմբոստացող իսլամական շարժում մը ճգմբ: Ժամանակները ինչպէ՞ս փոխուած են:

Սակայն, միւս կողմէ, Ուսամա Պըն Լամա էն կ'ա-



Աֆղանիստանի Լոտրմ գիւղի ամերիկեան ըմբակոծումներուն հետեւանքով վիրաւորուած անձեղ քաղաքացի մը եւ միամեայ զաւակը:

կոտ ճառը, որ անցեալ Կրիսթի դիշեր պատկերաւորութեան, դար մը կամ աւելի առաջ արտասանուած խօսքերու կրկնութիւնն է: Անգամ մը եւս, Իրանի, Թուրքիոյ եւ զաղութատիրութեան ենթարկուած իսլամական աշխարհի գանապան երկիրներուն մէջ բուն լեզու քաղաքականներ պահանջեցին տեղացի բունակներու եւ օտար շահերու հետ անոնց անբաղատելի կապերուն ջլատումը:

Աճարեկական վերջին պոսթկուսներուն մեղադրանքը մէկ մարդու վրայ բեռնելու, եւ այդպիսով հազարաւորներու աշխարհային հերոսի վերածելով, վճարող փորձով մը Սիպեալ Նահանգներ եւ Բրիտանիա, ի վնաս իրենց, կ'անտեսեն պարզ իրողութիւն մը:

Աշխարհի տարածքին սակաւթիւ իսլամներ ողջունեցին աճարեկութիւնը, որ հազարաւոր այլ անմեղներու կողքին սպաննեց կամ վիրաւորեց իրենց կրօնակիցներէն քանի մը հարիւր հոգի: Սակայն իսլամներուն մեծամասնութիւնը կ'ուզէ անմիջապէս տեսնել հետեւեալը. պաղեստինեան պետութիւն մը, որուն մայրաքաղաքը Արեւելեան Երուսաղէմն է, իրաքի մէջ մէկ միլիոն հոգի մահուան պատճառ դարձած պատժամիջոցներու ջնջումը եւ Մոհամէտի ծննդավայրէն ամերիկեան գինուորական խարխիւներուն ամբողջական հեռացումը:

Թերեւս Ուսամա Պըն Լամա էն, որ տակաւին պիտի ընդունի 11 Սեպտեմբերի յարձակումներուն պատասխանատուութիւնը, հետապնդուելու արժանի տիրական զէմք մը կրնայ չըլլայ այլեւս: Ան ողջ կամ մեռած կը պահանջուի յատկապէս վերոյիշեալ երեք վտանգաւոր պահանջները այնքան յստակօրէն արտասանած ըլլալուն համար: Վտանգաւոր, որովհետեւ այդ պահանջները կը հակադրուին արեւմտեան հին թէ նոր աշխարհներու շահերուն:

Այս պահանջները վտանգաւոր են, որովհետեւ նաեւ կը հակադրուին բաժնուած իսլամական աշխարհի վարչակարգերու մեծամասնութեան շահերուն: Իսլամական աշխարհ մը, ուր մարդկային իրաւունքները քաղաքացիական ազատութիւնները եւ ժողովրդավարական շարժումները բրտօրէն կը ճնշուին կրօնական իշխանութիւններով ղեկավարուող վարչակարգերու թէ ամբողջատիրութիւններու կողմէ:

ՌԵԴԱԿՏՈՐ ԿԵՍԵ

«Տի Կարտիլ»

ՔԻԼԻՍԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՆՊԱՍՏ

Քիլիսի Հայրենակցական Միութեան վարչութիւնը կը յայտնէ, թէ 2001 - 2002 տարեշրջանին համար սան - սանուհիներու կրթանպաստի դիմումագիրները կարելի է ստանալ վարչութեան հետեւեալ անդամներէն.

Ա. - Պրմ. Պարգէ Ազեղեան - հասցէ՝ Պուրճ Համուտ, Հարեթ Սաւեր փողոց, հեռ. 01 - 266984:

Բ. - Պրմ. Յակոբ Տաղլեան - հասցէ՝ Պուրճ Համուտ «Արմենիա» պողոտայ, հեռ. 01 - 261596:

Գ. - Պրմ. Յովհաննէ Պետիթեան - հասցէ՝ Ամանու, հեռ. 01 - 265519:

ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

www.lemagan.com

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԹՐՔԱՄԷՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶԻՉԸ

«Հայ-Թրքական Հաշտության Յանձնաժողով»-ը իր երկրորդ նիստը գումարեց Սեպտեմբեր 23-ը 25, Թուրքիոյ մէջ, եւ ի միջի այլոց որոնգրեց քարոզչական յատուկ քաղաքականութիւն: Հաւանաբար այս ծիրին մէջ է, որ յանձնաժողովի անդամ՝ Վան Գրիգորեան, 14 Հոկտեմբերին ինքնադաշնուփոխող հարցազրոյց տր տուած է «Նիւ Երրգիի Հայկական Ռատիո-ժամ»-ին: Հարցազրոյցը հրապարակուած է «Կոռուկ» լրատուական կայքին վրայ:

Վ. Գրիգորեան անդրադարձած է յանձնաժողովին կազմութեան, երրորդ ուժերու դերակատարութեան, Հայաստանի կառավարութեան դիրքորոշումին, հայ անդամներու թիւին եւ յանձնաժողովին ապագայ ծրագիրներուն: Հարցազրոյցը կը կրկնէ այլ առիթներով յանձնաժողովի անդամներուն արտայայտած սիտքերը ի պաշտպանութիւն այս Գաղափարներուն եւ ի դիմաց այն ընդհանրական դատապարտումին, որ ունեցան հայութեան գրեթէ բոլոր հատուածները եւ խմբաւորումները: Այս հարցազրոյցէն կը մէջբերենք կարգ մը պարբերութիւններ, որոնք կը յատկանշեն հարցազրոյցին ճեղքանակին եւ յանձնաժողովին ստանդութիւնը:

«**ՊԱՏԱՍԽԱՆ**:- Թուրքերը եւս ուիս կ'առնեն ժողովի նստելով ինծի նման մարդու մը հետ, որ քանի մը տարի առաջ, կարգ մը չըջնակներու կողմէ կը նկատուէր Թուրք ժողովուրդին թիւ մէկ թշնամին»:

ՀԱՐՑՈՒՄ- Ինչո՞ւ 6 Թուրք եւ 4 հայ ներկայացուցիչներ կան. ասկա կարեւորութիւն ունի՞:

«**Պ**:- Ըսեմ, որ մենք նկատի չ'առինք, թէ մարդիկ ինչպէս պիտի հակադրեն: Իրրեւ գործնական հարց մենք չ'որոս լաւ կ'աշխատինք եւ իրենց վեցին հետ գլուխ կ'ելլենք»:

«**Պ**:- Մենք Թուրքիոյ մէջ հանդիպեցանք հայկական ահաբեկչութենէն վնաս կրած մարդոց, բայց, որոնք հայերուն նկատմամբ քէն չուենէին»:

«**Պ**:- Մենք ունինք դուրսէն անձ մը՝ ատենապետ- միջնորդ Տէյվիտ Ֆրիքիսը (*), որ կը դասախօսէ Վիեննայի Դուստադիտական Ակադեմիային մէջ: Ան վերջերս անդամակցեցաւ նաեւ Նիւ Եորքի Արտաքին Ֆարաբերութիւններու խորհուրդին: Ան կը գործէ իրրեւ մեր ատենապետը, մեզի հետ կը հանդիպի առանձնաբար եւ ապա՝ հաւաքաբար քննարկելու համար մեր օրակարգը»:

«**Պ**:- Թրքական կառավարութեան մէջ շատեր հակահայ են: Իմ հակադիպելութիւնս այն է, որ մենք պէտք է ոչ թէ վանենք այդ մարդիկը, այլ՝ իրենց հետ չփամս մէջ մտնենք: Պէտք է իմանանք, թէ Թուրքիոյ մէջ հանրային կարծիքի տարբերակներ կան եւ թէ ներկայիս գոյութիւն ունի թշնամական, ցեղասպանական մտայնութիւն մը: Մեզմէ ոչ ոք կ'անդիտաւայ, որ Հայաստանը կը դիմագրուէ իրական վտանգի սպառնալիքներ: Լեռնային Ղարաբաղը դէմ յանդիման է իրական վտանգի սպառնալիքներու: Մեր մտեցումը այն է, որ պէտք չէ անտեսել Թուրքիոյ մէջ այն մարդիկը, որոնք շատ պիտի ուզէին գործը վերջացնել, այլ՝ պէտք է անոնց հետ չափուիլ, գանոնք բացայայտել եւ գտնել անոնց կարծիքին ընդլիմացող մարդիկ:

«**Հ**:- Ինչու զուք անձնապէս կը գրայիք այս հարցով»:

«**Պ**:- Ինչու ուեւէ մէկը յանձնառութիւն կ'ունենայ իր ընտանիքին նկատմամբ: Օր մը, յատկապէս տաք վայրկեանի մը մտածելի իմ գաւակներուս մասին: Մենք շատ երկար ժամանակէ ի վեր կը զբաղինք Ուսիւնկընի մէջ լուպիինկի գործով:

Երբ գաւակներս մեծնան իրենք եւս նոյն բաները պիտի ընեն, նոյն ռազմավարութիւնը պիտի օգտագործեն եւ նոյն պատերոն պիտի գարնրւին, թէ ոչ մէջտեղ պիտի գայ բան մը, որ պիտի փոխէ անոնց ուղին, ինչպէս նաեւ ներկայ յարաբերութիւններուն պատճառով Թուրքիոյ խեղդող շրջափակումին ենթարկուող հայերուն եւ Հայաստանին ուղին»:

Որեմն այսպէս. Թուրքիոյ «թիւ մէկ թշնամին» եւ իր կարող ընկերները, «որսքեր» կ'առնեն եւ երկիւստութեան կը նստին թուրքերու հետ: Կ'երեւի թէ պէտք չէ գարմաւալ, որ բացայայտօրէն ամերիկեան եւ թրքամէտ այս Գաղափարներուն հաւատարմօրէն ծառայող հայ մը առանց անչնալու կ'ակնարկէ «հայկական ահաբեկչութեան», այսօր, երբ Ազրպէյճանը եւ Թուրքիան ամէն ճիգ կը թափեն փնացնելու Հայաստանի եւ հայութեան կապերը Միացեալ Նահանգներուն հետ արծարծելով կարծեցեալ «հայկական ահաբեկչութիւնը»:

